

• *Póki my*
ZYJEMY



MAGIA, MUZYKA I SPACER

Europejski dla Dzieci

SPIIS TREŚCI

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն



04 ZEBRANIE SPRAWOZDAWCZO WYBORCZE W ZWIĄZKU POLAKÓW W ARMENII "POLONIA"
ՀԱՇՎԵՏՈՒ-ԸՆՏՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԼԵՇԵՐԻ «ՊՈԼՈՆԻԱ» ՄԻՈՒԹՅՈՒՆՈՒՆ

16 NOWY NAUCZYCIEL Z POLSKI
ՆՈՐ ՈՒՍՈՒՑԻՉ ԼԵՀԱՍՏԱՆԻՑ

18 NARODOWE CZYTANIE
ԱԶԳԱՅԻՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ

22 POLONIJNY BIEG NIEPODLEGŁOŚCI W ARMENII
ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՎԱԶՔԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

26 KONCERT MNIEJSZOŚCI NARODOWYCH W ERYWANIU
ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԵՐԳ ԵՐԵՎԱՆՈՒՄ

28 MAGIA, MUZYKA I SPACER, CZYLI O EUROWIZJI DLA DZIECI I WIZYCIE POLSKIEJ TELEWIZJI W ERYWANIU
ԿԱԽԱՐԴԱՆՔ, ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶՔՈՍԱՆՔ, ԱՅՍԻՆՔՆ՝ ՄԱՆԿԱԿԱՆ ԵՎՐՈՏԵՍԻԼԻ ԵՎ ԼԵՀԱԿԱՆ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ՝ ԵՐԵՎԱՆ ԿԱՏԱՐԱԾ ԱՅՑԻ ՄԱՍԻՆ

31 POLACY W ARMENII-II EDYCJA PUBLIKACJI "MOJA POLSKA RODZINA"
ԼԵՀԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ – «ԻՄ ԼԵՀԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔԸ» ԳՐՔԻ ԵՐԿՐՈՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

35 POLSKI STRÓJ NARODOWY- PREZENTACJE W ERYWANIU I GIUMRI
ԼԵՀԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՏԱՐԱԶ. ՇՆՈՐՀԱՆԴԵՍՆԵՐ ԵՐԵՎԱՆՈՒՄ ԵՎ ԳՅՈՒՄՐԻՈՒՄ

39 QUIZ O POLSCE 2022
ԽԱՂ-ՎԻԿՏՈՐԻՆԱ ԼԵՀԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

44 W CIENIU WOJNY
ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՏՎԵՐՈՒՄ

NA OKŁADCE:
©Studio Fotograficzne Marashljan.

PÓKI MY ŻYJEMY

Agnieszka Wasilczuk

Redaktorka Naczelna, nauczycielka języka polskiego skierowana do pracy w Armenii przez Ośrodek Rozwoju Polskiej Edukacji za Granicą

Dyrektor artystyczny i grafik komputerowy

Mark Mikojan
Stella Burnuchjan

Nad artykułami pracowali:

Paweł Elias
Nune Mamjan
Sofia Czylingarjan
Naira Atanesjan
Jolanta Goździk
Agnieszka Sztąpka
Karine Kjufarjan
Marianna Karakejan

ՊՈՒԿԻ ՄԻ ԺԻՅԵՄԻ

Ազնիեզյա Վաշիւշուկ

Գլխավոր խմբագիր, լեհերեն լեզվի ուսուցչուհի՝ գործուղված Հայաստան Արտերկրում լեհական կրթության զարգացման կենտրոնի կողմից

Գեղարվեստական ղեկավար և գրաֆիկական դիզայներ

Մարկ Միկոյան
Ստելյա Բուռնուչյան

Հոդվածների վրա աշխատել են՝

Պավել Էլիաս
Նունե Մամյան
Սոֆյա Չիլինգարյան
Նաիրա Աթանեսյան
Յոլանտա Գոժժիկ
Ազնիեզյա Շտոմպկա
Կարինե Զյուֆարյան
Մարիաննա Կարակեյան



KANCELARIA PREZESA RADY MINISTRÓW



STOWARZYSZENIE
„WSPÓLNOTA POLSKA”

DZIĘKUJEMY

Senatowi Rzeczypospolitej Polskiej, Stowarzyszeniu „Wspólnota Polska”, Fundacji „Pomoc Polakom na Wschodzie”, Ambasadzie Rzeczypospolitej Polskiej w Erywaniu, Oddziałowi ds. Mniejszości Narodowych oraz Religii Administracji Premiera Republiki Armenii za stałą pomoc oraz wsparcie działalności Związku Polaków w Armenii „Polonia”.

Kwartalnik **„PÓKI MY ŻYJEMY”** jest finansowany przez Stowarzyszenie „Wspólnota Polska” ze środków Kancelarii Prezesa Rady Ministrów w ramach zadania publicznego dotyczącego pomocy Polonii i Polakom za granicą. Publikacja wyraża jedynie poglądy autora/ów i nie może być utożsamiana z oficjalnym stanowiskiem Kancelarii Prezesa Rady Ministrów.

ՇՆՈՐՀԱԿԱԼ ԵՆՔ

Լեհաստանի Հանրապետության Սենատին, «Վսպուլնոտա Պոլսկա» ընկերությանը, «Արեւելքում լեհերի օգնություն» ֆոնդին, Հայաստանում Լեհաստանի Հանրապետության Դեսպանությանը, Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի բաժնին՝ Հայաստանում լեհերի «Պոլոնիա» միության գործունեությանը մշտապես օգնություն և աջակցություն ցուցաբերելու համար:

«ՊՈՒԿԻ ՄԻ ԺԻՅԵՄԻ» ամսագիրը ֆինանսավորվում է «Վսպուլնոտա Պոլսկա» ընկերության կողմից՝ Նախարարների խորհրդի Նախագահի գրասենյակի միջոցներից Պոլոնիային և արտերկրում բնակվող լեհերին օգնության մասին հանրային պատվերի շրջանակներում: Հրատարակությունն արտահայտում է միայն հեղինակի/ների հայացքները և չի կարող նույնականացվել Նախարարների խորհրդի Նախագահի գրասենյակի պաշտոնական դիրքորոշման հետ:

„PÓKI MY ŻYJEMY” – organ prasowy Związku Polaków w Armenii „Polonia”
Adres do korespondencji: ul. Tumanyan 28/20, m. 51B, Erywań, Republika Armenii
Tel.: (+374) 96 72-73-10, E-mail: liana-hf@wp.pl

«ՊՈՒԿԻ ՄԻ ԺԻՅԵՄԻ»-ն Հայաստանում Լեհերի «Պոլոնիա» միության մամուլի օրգանն է
Խմբագրության հասցեն՝ Թումանյան փ. 28/20, բն. 51B, Երևան, Հայաստանի Հանրապետություն
Հեռ.՝ (+374) 96 72-73-10, E-mail՝ liana-hf@wp.pl



Polonia
ZWIĄZEK POLAKÓW W ARMENII



ZEBRANIE SPRAWOZDAWCZO WYBORCZE W ZWIĄZKU POLAKÓW W ARMENII

“Polonia”

ՀԱՇՎԵՏՈՒ-ԸՆՏՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԼԵՀԵՐԻ
«ՊՈԼՈՆԻԱ» ՄԻՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Zgodnie z założeniami statutowymi Związku Polaków w Armenii “Polonia” odbyło się zebranie sprawozdawczo-wyborcze zamykające kadencję 2017-2022.

Miało ono miejsce w sali konferencyjnej hotelu “Best Western Plus Kongres” w Erywaniu, w dniu 06.11.2022. Do najważniejszych punktów porządku dziennego należało sprawozdanie z działalności ZPwA “Polonia” oraz wybory prezesa i zarządu erywańskiej organizacji polonijnej. Sprawozdanie, ilustrowane prezentacją fotograficzną, odczytała pani prezes Liana Harutyunyan. Omówiła w nim realizację projektów, przedsięwzięć i zadań zaplanowanych do realizacji w ciągu ostatnich pięciu lat. Pani prezes wyraziła też wdzięczność polskim instytucjom wspierającym działalność Związku Polaków w Armenii “Polonia”, a także członkom organizacji, którzy aktywnie działali na rzecz ZPwA “Polonia”. Następnie komisja skrutacyjna poinformowała uczestników zebrania o rozpoczęciu wyborów. Po ich zakończeniu i przeliczeniu głosów ogłoszono wyniki. Prezesem Związku Polaków w Armenii “Polonia” została pani Liana Harutyunyan. Wybrano też nowy zarząd. Honorowym gościem zebrania był Pan Konsul Jarosław Strycharski reprezentujący Ambasadę RP w Armenii. W ostatniej części zebrania składano gratulacje nowo wybranej pani prezes, rozmawiano o planach związanych z rozpoczynającą się kadencją prezesa i zarządu.

Poniżej prezentujemy tekst sprawozdania pani prezes Liany Harutyunjan.

Gratulujemy wyboru!

Հայաստանում լեհերի «Պոլոնիա» միության կանոնադրության համաձայն տեղի ունեցավ 2017-2022 թ.թ. ժամանակաշրջանն ամփոփող հաշվետու-ընտրական ժողովը:

Այն տեղի ունեցավ Երևանի «Բեսթ Վեսթերն Պլյուս Կոնգրես» հյուրանոցի կոնֆերանսների սրահում 2022 թվականի նոյեմբերի 6-ին: Օրակարգի կարևորագույն կետերից էին Հայաստանում լեհերի «Պոլոնիա» միության հաշվետվությունը, ինչպես նաև միության նախագահի և խորհրդի ընտրությունները: Հաշվետվությունը, որն ուղեկցվում էր լուսանկարների ցուցադրությամբ, ներկայացրեց միության նախագահ Լիանա Հարությունյանը: Հաշվետվության մեջ խոսվեց վերջին 5 տարվա ընթացքում իրականացված ծրագրերի, միջոցառումների մասին: Նախագահն իր երախտագիտությունը հայտնեց Հայաստանում լեհերի «Պոլոնիա» միության գործունեությանն աջակցող լեհական կառույցներին, ինչպես նաև կազմակերպության անդամներին, ովքեր ակտիվ աջխատել են Հայաստանում լեհերի «Պոլոնիա» միությունում: Այնուհետև հաշվիչ հանձնաժողովը ժողովի մասնակիցներին տեղեկացրեց ընտրությունների մեկնարկի մասին: Ընտրություններն ավարտելուց և ձայները հաշվելուց հետո հրապարակվեցին արդյունքները: Հայաստանում լեհերի «Պոլոնիա» միության նախագահ դարձավ Լիանա Հարությունյանը: Ընտրվեց նաև խորհրդի նոր կազմ: Հանդիպման պատվավոր հյուրն էր հյուպատոս Յարոսլավ Ստրիչարսկին, ով ներկայացնում էր Հայաստանում Լեհաստանի Հանրապետության դեսպանությունը: Ժողովի վերջում հնչեցին շնորհավորական խոսքեր ուղղված նորընտիր նախագահին, քննարկվեցին նախագահի և խորհրդի առաջիկա պաշտոնավարման հետ կապված ծրագրերը:

Ստորև ներկայացնում ենք «Պոլոնիայի» նախագահ Լիանա Հարությունյանի զեկույցի տեքստը:

Շնորհավորում ենք:



Ambasadzie Rzeczypospolitej Polskiej w Armenii, Stowarzyszeniu „Wspólnota Polska”, Fundacji „Pomoc Polakom na Wschodzie”, Ośrodkowi Rozwoju Polskiej Edukacji za Granicą, Kancelarii Prezesa Rady Ministrów, Senatowi Rzeczypospolitej Polskiej. Bez pomocy i wsparcia wyżej wymienionych instytucji wiele naszych inicjatyw i działań byłoby niemożliwych. Pragnę wyrazić szczególną wdzięczność, w imieniu całej „Polonii” Radzie do spraw Religii i Mniejszości Narodowych w Kancelarii Premiera Republiki Armenii, Ministerstwu Edukacji, Kultury i Sportu Republiki Armenii, erywańskim uniwersytetom i instytucjom kultury i podziękować za wsparcie i serdeczny stosunek do nas, który odczuwamy na każdym kroku.

Jeszcze raz serdecznie dziękuję.

W ciągu minionych pięciu lat starałam się, jak już wspomniałam, kontynuować linię działań moich poprzedników, a jednocześnie podejmować nowe wyzwania służące rozwojowi erywańskiej „Polonii”.

Jednym z moich priorytetów, o którym wspomniałam w przemówieniu wyborczym 5 lat temu, było znalezienie i przystosowanie do pracy siedziby naszej organizacji w centrum miasta. Obiecałam wtedy Państwu, że siedziba „Polonii” wróci do centrum, wywiązałam się z tej obietnicy i dzisiaj, z tego miejsca, mogę Państwu ponownie obiecać, że dołożę wszelkich starań, aby pomieszczenie przy

hifnasaդիրների գործը՝ զուգահեռաբար իրականացնելով՝ Նոր քայլեր՝ դեմ դուրս գալով ժամանակի մարտահրավերներին:

Վերջին տարիների ընթացքում բավականաչափ ընդլայնել ենք մեր գործունեությունը, որի իրականացումը հնարավոր է դառնում Լեհաստանից ստացված օժանդակության շնորհիվ: Ցանկանում եմ իմ երախտագիտությունը հայտնել Հայաստանում Լեհաստանի Հանրապետության դեսպանատանը, «Վսպուլտոնա Պոլսկա» ընկերությանը, «Օգնություն Արևելքում գտնվող լեհերին» հիմնադրամին, Արտերկրում լեհական կրթության զարգացման կենտրոնին, վարչապետի աշխատակազմին, Լեհաստանի Հանրապետության Սենատին: Առանց վերոնշյալ հաստատությունների օժանդակության մեր Նախաձեռնությունների և գործունեության իրականացումն անհնարին կլիներ: Ցանկանում եմ մեր ամբողջ «Պոլնիայի» անունից խորին երախտագիտությունս հայտնել Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմին կից Ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի բաժնին, Հայաստանի կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը, հայկական բարձրագույն ուսումնական հաստատություններին ու մշակութային օջախներին մեզ ցուցաբերված աջակցության և ջերմ վերաբերմունքի համար,

ulicy Tumaniana dalej służyło wszystkim zainteresowanym. Nie muszę Państwu tłumaczyć, że bez siedziby nie zrealizowalibyśmy wielu naszych pomysłów. Pomieszczenie przy ulicy Tumaniana, to nie tylko miejsce pracy lecz również nasz wspólny dom.

W tym domu pojawia się codziennie kilkadziesiąt osób, które przychodzą tu uczyć się języka polskiego, tym samym kontynuując dzieło zapoczątkowane 20 lat temu. W 2001 roku przyjechał do Erywania pierwszy nauczyciel z Polski. I od tej pory, nieprzerwanie, Ośrodek Rozwoju Polskiej Edukacji za Granicą corocznie kieruje do Armenii nauczycieli języka polskiego. Dzięki moim staraniom, od roku 2018, nauczyciel kierowany jest też do filii Związku Polaków w Armenii w Giumri. Istnienie dwóch ośrodków nauczania języka polskiego w małej Armenii świadczy o prężnej, zauważalnej, a także docenianej działalności „Polonii”.

Jednym z najważniejszych przedsięwzięć „Polonii” jest wydawanie kwartalnika „Póki my żyjemy”. Pierwszy numer tego polonijnego czasopisma ukazał się w 2003 roku. Kontynuacja tej inicjatywy zawsze bliska była mojemu sercu. Koncepcja



որն ուղեկցում է մեզ յուրաքանչյուր քայլին:

Եվս մեկ անգամ՝ անչափ շնորհակալ եմ:

Նախորդ հինգ տարիների ընթացքում, ինչպես արդեն նշեցի, փորձել եմ շարունակել իմ նախորդների բռնած ուղին՝ միևնույն ժամանակ նախաձեռնելով նոր քայլեր՝ միտված երևանյան «Պոլոնիայի» զարգացմանը:

Ինձ համար առաջնայնություններից մեկը, որի մասին խոսել եմ դեռևս 5 տարի առաջ իմ ընտրական ելույթի ժամանակ, քաղաքի կենտրոնում մեր միության նոր գլխամասային գրասենյակ փնտրելու և այն մեր աշխատանքային գործունեությանը համապատասխանեցնելու գործն էր: Այն ժամանակ Ձեզ խոստացել էի, որ «Պոլոնիայի» գլխամասային գրասենյակը կվերադառնա կենտրոն, և կարող եմ կրկին վստահեցնել, որ հավելյալ ջանքեր կգործադրեմ, որպեսզի Թումանյան փողոցի վրա գտնվող գրասենյակը շարունակի ծառայել բոլոր շահառուներին: Կարծում եմ ավելորդ է բացատրել, որ առանց գրասենյակի մեր բազմաթիվ ծրագրերը պարզապես իրականություն չէին դառնա: Եվ իրոք, Թումանյան փողոցի վրա գտնվող տարածքը ոչ միայն աշխատավայր է, այլև մեր բոլորի տունը:

Ամեն օր այդ տանն են հայտնվում տասնյակ մարդիկ, որոնք այդտեղ են գալիս լեհերեն սովորելու նպատակով, այդպիսով շարունակում եմ մի գործ, որի հիմքը դրվել է դեռևս 20 տարի առաջ: 2001 թ.-ին Երևան է եկել Լեհաստանից առաջին ուսուցիչը: Եվ այդ ժամանակվանից ի վեր ամեն տարի առանց ընդհատումների Արտերկրում լեհական կրթության զարգացման կենտրոնի շնորհիվ Հայաստան են ժամանում լեհերենի մանկավարժներ: Իմ ջանքերի շնորհիվ 2018 թ.-ից ի վեր լեհ ուսուցիչներ են մեկնում նաև Գյումրիում գտնվող Հայաստանում լեհերի «Պոլոնիա» միության մասնաճյուղ: Փոքր Հայաստանում լեհերենի ուսուցման երկու կենտրոնների գոյությունը փաստում է «Պոլոնիայի» դինամիկ, ակնառու, նաև գնահատված գործունեության մասին:

«Պոլոնիայի» ամենակարևոր նախաձեռնություններից մեկը «Պոլի մի ժիյեմի» ամսագրի հրատարակումն է: Պոլոնիայի ամսագրի առաջին համարը լույս է տեսել 2003 թ.-ին: Այս նախաձեռնության շարունակական իրագործումը միշտ սրտիս մոտ է եղել: Իմ պաշտոնավարման ընթացքում ամսագրի գրաֆիկական հայեցակարգն ու թեմատիկական փոփոխությունների են ենթարկվել: Այսօր ընթերցողն իր ձեռքն է վերցնում պրոֆեսիոնալ հրատարակված ամսագիր, որում կարող է գտնել տարատեսակ ոլորտներին առնչվող բազմատեսակ հետաքրքրական տեղեկություններ՝ լեհերենով և հայերենով:

graficzna i tematyczna kwartalnika zmieniała się za czasów mojej kadencji. Dziś czytelnik bierze do ręki profesjonalnie wydane czasopismo, w którym znaleźć może wiele interesujących informacji z różnych dziedzin w języku polskim i ormiańskim.

W moich założeniach priorytetowych, jako prezesa „Polonii” znalazł się też punkt dotyczący polonijnego chóru. Dołożyłam wszelkich starań, aby umożliwić członkom i dyrygentowi chóru warunki niezbędne do pracy twórczej. Chór powstał w roku 1998, uświetnił swoimi występami wiele imprez polonijnych w Armenii, a podczas mojej kadencji udało się zorganizować pierwszy wyjazd naszych chórzystów do Polski, gdzie uczestniczyli w 50 Festiwalu Chórów Polonijnych w Koszalinie.

Objmując funkcję prezesa Związku Polaków w Armenii, chciałam nawiązać bezpośrednie kontakty z polskimi instytucjami wspierającymi działalność Polonii. W 2018 roku po raz pierwszy uczestniczyłam w V Światowym Zjeździe Polonii i Polaków z Zagranicy i całkiem niedawno, we wrześniu tego roku, w Światowym Kongresie Kraj-Emigracja. Podczas pobytów w Polsce nawiązałam twórcze i ważne dla rozwoju ormiańskiej Polonii kontakty z przedstawicielami parlamentu, rządu, Stowarzyszenia „Wspólnota Polska”, Ośrodka Rozwoju Polskiej Edukacji za Granicą, Fundacji „Pomoc Polakom na Wschodzie” i Polskiego Komitetu Olimpijskiego. Miałam też okazję nawiązać współpracę z przedstawicielami organizacji polonijnych z innych krajów.

Որպես «Պոլոնիայի» նախագահ՝ իմ առաջնահերթությունների շարքում է նաև պոլոնիայի երգչախմբի հետ կապված հարցը: Ջանադիր կերպով աշխատել եմ երգչախմբի անդամների և խմբավարի գործունեության համար ապահովել բոլոր անհրաժեշտ պայմանները: Երգչախումբը կազմավորվել է 1998 թ.-ին և իր կատարումներով Հայաստանի Պոլոնիայի բազում միջոցառումներ է զարդարել, իսկ իմ պաշտոնավարման ընթացքում հնարավոր դարձավ նաև կազմակերպել մեր երգչախմբի անդամների առաջին ուղևորությունը Լեհաստան, որտեղ մասնակցել են Կոշալինում կայացած Պոլոնիայի երգչախմբերի 50-րդ փառատոնին:

Ստանձնելով Հայաստանում լեհերի «Պոլոնիա» միության նախագահի պաշտոնը, ցանկացել եմ անմիջական կապ հաստատել Պոլոնիայի գործունեությունը խթանող լեհական հաստատությունների հետ: 2018 թ.-ին առաջին անգամ մասնակցեցի Պոլոնիայի և արտերկրում բնակվող լեհերի համաշխարհային V կոնգրեսին, իսկ ոչ այնքան վաղ անցյալում՝ սույն թվականի սեպտեմբերին Երկիր-արտագաղթ համաշխարհային կոնգրեսին: Լեհաստանում գտնվելու ընթացքում ստեղծագործական և հայկական Պոլոնիայի զարգացման համար շատ կարևոր կապեր եմ կարողացել հաստատել Լեհաստանի խորհրդարանի, կառավարության, «Վսպյունտա Պոլսկա» ընկերության, Արտերկրում լեհական կրթության զարգացման կենտրոնի, «Արևելքում գտնվող







լեռերի օգնության» հիմնադրամի և լեռական օլիմպիական կոմիտեի ներկայացուցիչների հետ: Նաև հնարավորություն եմ ունեցել կապ հաստատելու այլ երկրների պոլոնիայի կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:

Միության նախագահի պարտականությունների կատարման շրջանակներում ինձ համար անչափ կարևոր էր ակտիվացնել մեր միության անդամների կապը Լեհաստանի հետ: Շատ էի ցանկանում, որպեսզի երկիրը, որտեղ անց եմ կացրել իմ մանկությունն ու դպրոցական տարիները, հարազատ դառնար նրանց ոչ միայն զուտ տեսական ծանոթացման շնորհիվ, այլև շոշափելի կապի, այսինքն՝ դեպի Լեհաստան այցերի միջոցով: Եվ այսպես.

Իմ պաշտոնավարման ընթացքում «Պոլոնիայի» անդամները մասնակցել են «Օրլե Գնիազդո 2019» Պոլոնիայի երիտասարդների հավաքին, Պոլոնիայի բժշկական X կոնգրեսին և Լեհ բժիշկների III համաշխարհային հավաքին, 2021 թ.-ին Եվրոպայի Պոլոնիայի Սենատին: Այդ տասնյակ անձինք, ովքեր մասնակցել են վերոնշյալ միջոցառումներին, այսօր իրենց ակտիվ մասնակցությունն են ցուցաբերում մեր միության գործունեությանը՝ կիրառելով ձեռք բերված փորձն ու գիտելիքները:

Հայաստանում լեռերի «Պոլոնիա» միության գործունեության կարևոր բաղադրիչ է բաց դռների քաղաքականությունը: Որպես Հայաստանում լեռերի միության նախագահ անպատասխան չեմ թողնում լեռ անհատներից կամ լեռական հաստատություններից ստացված և ոչ մի հարցում: Մեր հյուրերն են ինչպես անհատները, այնպես էլ հիմնադրամների, կազմակերպությունների և ընկերությունների ներկայացուցիչները, որոնց աջակցում ենք Հայաստանի տարածքում իրենց ծրագրերի իրականացման գործում: Ձեռք մոռանում նաև սովորական զբոսաշրջիկների մասին, ովքեր մեզ են դիմում օգնության խնդրանքով կամ պարզապես հանդիպման ու զրույցի ակնկալիքով:

Ձեր թույլտվությամբ ներկայացնեմ «Պոլոնիայում» իմ պաշտոնավարման 5 տարիների ընթացքում իրականացվող նախագծերը: Դրանցից որոշները կրում են պարբերական բնույթ, որոշները՝ շարունակական, իսկ որոշներին ես ձեռնամուխ եղա՝ ստանձնելով «Պոլոնիայի» նախագահի պաշտոնը:

Ներկայացնելով այդ նախագծերը, ընդ որում Ձեզանից շատերն այդ նախագծերի անմիջական մասնակիցներ են եղել, կցանկանայի շեշտել, որ «Պոլոնիայի» գործունեությունը հնարավոր է ֆինանսավորման շնորհիվ, որը ստանում ենք

Niezwykle ważną rzeczą w moich planach związanych z pełnieniem funkcji prezesa wydawało mi się ożywienie kontaktów z Polską członków naszej organizacji. Zależało mi na tym, żeby kraj w którym spędziłam dzieciństwo i lata szkolne stał się im bliski nie tylko poprzez teoretyczne jego poznanie lecz również poprzez namacalne kontakty z nim, czyli wyjazdy do Polski. I tak: W czasie mojej kadencji członkowie „Polonii” uczestniczyli w Zlocie Młodzieży Polonijnej „Orle Gniazdo- 2019”, w X Kongresie Polonii Medycznej i III Światowym Zjeździe Lekarzy Polskich-2019”, w Polonijnych Igrzyskach Olimpijskich w roku 2019 i 2021, w Senacie Polonii Europy w 2021 roku, w II Światowym Forum Mediów Polonijnych – 2019. Tych kilkadziesiąt osób, które pojechały do Polski w ramach wyżej wymienionych inicjatyw, dzisiaj aktywnie uczestniczy w działalności naszego stowarzyszenia,

«Ասպուլտտա Պոլսկա» ընկերության կողմից Նախարարների խորհրդի նախագահի գրասենյակի միջոցներից՝ «Պոլոնիա և արտերկրում բնակվող լեհեր» մրցույթի շրջանակներում, ինչպես նաև Արտաքին գործերի նախարարության միջոցներից՝ Լեհաստանի դեսպանության հետ համագործակցության շնորհիվ: Այստեղ կցանկանայի երախտագիտությունս հայտնել Լեհաստանի Հանրապետության հյուպատոս Յարոսլավ Ստրիխարսկուն մեր համատեղ նախաձեռնություններին աջակցության համար:

«Իմ լեհական ընտանիքը» հրատարակությունը Անկախության վազքը

Մայիսի 3-ի սահմանադրության, Դրոշի և Պոլոնիայի ու արտերկրում ապրող լեհերի օրվա տոնակատարությունը



wykorzystując doświadczenia i wiedzę tam zdobyte.

Ważnym elementem działalności Związku Polaków w Armenii „Polonia” jest prowadzenie polityki drzwi otwartych. Jako prezes Związku Polaków w Armenii nie zostawiam bez odpowiedzi żadnej wiadomości od Polaków, reprezentujących siebie bądź polskie instytucje. Naszymi gośćmi są zarówno osoby prywatne, jak i fundacje, organizacje oraz stowarzyszenia, które wspieramy w ich przedsięwzięciach na terenie Armenii. Nie zapominamy też o zwykłych turystach, którzy proszą o pomoc czy czasem tylko o spotkanie i rozmowę.

Pozwolą Państwo, że teraz opowiem o projektach, które zrealizowaliśmy w ciągu ostatnich pięciu lat, kiedy przewodniczyłam „Polonii”. Niektóre z tych przedsięwzięć są cykliczne, inne są kontynuacją, a jeszcze inne zapoczątkowałam, obejmując stanowisko prezesa „Polonii”.

Przybliżając Państwu te projekty, chociaż większości z nich byli zapewne Państwo uczestnikami, chciałabym podkreślić, że działalność „Polonii” jest możliwa dzięki dofinansowaniu, które otrzymujemy za pośrednictwem Stowarzyszenia „Wspólnota Polska” ze środków Kancelarii Prezesa Rady Ministrów w ramach konkursu Polonia i Polacy za Granicą oraz dzięki współpracy z Ambasadą Rzeczypospolitej Polskiej w Armenii ze środków Ministerstwa Spraw Zagranicznych. W tym miejscu chciałabym podziękować Panu Konsulowi Jarosławowi Strycharskiemu za wspieranie naszych wspólnych inicjatyw.

Publikacja – „Moja polska rodzina”,

Bieg Niepodległości

Obchody Narodowego Święta Konstytucji 3 Maja, Dnia Flagi i Dnia Polonii i Polaków za Granicą

Mikołajki

Polonijne Boże Narodzenie

Polonijna Wielkanoc

Tłusty czwartek

Andrzejki

Koncert „Komitas-Chopin”

Koncert Michała Rajewskiego w Erywaniu i w Giumri

Narodowe Czytanie

„Z polską książką na ty”

„Razem dla edukacji”

Quiz wiedzy o Polsce

Polonijne spektakle

Edukacyjne kolonie dla dzieci w Dilidzanie

Սբ. Նիկողայոսի օր (Միկոլայի)

Պոլոնիայում Սբ. Ծննդյան տոնակատարություն

Պոլոնիայում Սբ. Զատիկի տոնակատարություն

Յուդայի Հինգշաբթի

Սբ. Անդրեասի օրվա տոնակատարություն (Անժեյկի)

«Կոմիտաս - Շոպեն» համերգը

Միխայի Ռուսակու համերգը Երևանում և Գյումրիում

Ազգային ընթերցանություն

«Ծանոթություն լեհական գրքի հետ»

«Միասին հանուն կրթության»

Լեհաստանի մասին տեղեկությունների վիկտորինա

Պոլոնիական բեմադրություններ

Դիլիջանում երեխաների համար կրթական ճամբարներ

Աղվերանում երաժշտական դասընթացներ

«Պոլոնիայի» 25-ամյակի տոնակատարություն

Ներկա դրությամբ Հայաստանում լեհերի միությունում անդամագրված են 300 հոգի:

Կարծում եմ՝ գիտակցում եք, որ նման հասարակական կազմակերպության ղեկավարումը մարտահրավեր է՝ և լոգիստիկ, և կազմակերպչական, և ան՝ հոգեբանական-մանկավարժական, իսկ երբեմն նույնիսկ՝ մաթեմատիկական-հաշվապահական: Չեմ պատրաստվում տրտնջալ աշխատանքի բարդության վերաբերյալ, որը կատարում եմ հասարակական հիմունքներով: Դա իմ գիտակցված որոշումն ու ընտրությունն է: Ստանձնել եմ պարտականություններ, որոնց չեմ կարող զանց առնել, քանի որ դրանք կապված են մարդկանց հետ, միության անդամների հետ, մեր համատեղ առաքելության հետ: Իմ երեխաների հետ ժամանցի փոխարեն, հաճախ մինչև ուշ գիշեր դիմումներ են գրել «Պոլոնիայի» գործունեության համար անհրաժեշտ ֆինանսավորման համար, կազմել իրականացված խախտածների վերաբերյալ հաշվետվություններ, խախտածել բյուջեն և ծախսերն այնպես, որ միությունը կարողանա պատշաճ կերպով ծավալել իր գործունեությունը մինչև այն պահը, երբ ստացվեն այն միջոցները, որոնք հատկացվել են տվյալ խախտածի իրականացման կամ նստավայրի ծախսերը հոգալու համար:

Չնայած վերջին 5 տարիների ընթացքում ձեռք բերված փորձի, այս աշխատանքը շարունակում է մնալ պահանջախնդիր, բարդ և աշխատատար, առավել ևս այժմ՝ ամբողջ աշխարհում, այդ թվում



Warsztaty muzyczne w Aghweranie
 Obchody jubileuszu 25-lecia „Polonii”

և՛ Լեհաստանում և Հայաստանում տիրող բարդ քաղաքական և տնտեսական պայմաններում:

Obecnie Związek Polaków w Armenii
 liczy około 300 członków.

Բարեբախտաբար, այս ամենի մեջ միայնակ չեմ: Ցանկանում եմ այստեղից շնորհակալություն հայտնել բոլորին, ովքեր իրենց նվիրվածությամբ և աջխառնակությամբ ներգրավվել են մեր կազմակերպությունում իրականացված խնդիրների, նախաձեռնու-

Zapewne zdają sobie Państwo sprawę z tego, że kierowanie organizacją społeczną to duże wyzwanie – logistyczne, organizacyjne, nieraz psychologicz-

no-pedagogiczne, a bardzo często też matematyczno-księgowe. Nie zamierzam narzekać na trudy tej pracy, którą wykonuję w czynnie społecznym. To moja świadoma decyzja i wybór. Wzięłam na swoje barki wiele obowiązków, a są to obowiązki, z których nie mam prawa się nie wywiązać, bo dotyczą ludzi, członków stowarzyszenia, naszej wspólnej misji. Kosztem czasu spędzonego z moimi dziećmi, nieraz do późna w nocy pisałam wnioski o dofinansowanie działalności „Polonii”, przygotowywałam sprawozdania ze zrealizowanych projektów, planowałam budżet i wydatki w taki sposób, żeby stowarzyszenie mogło normalnie funkcjonować do momentu, kiedy dotrą fundusze przeznaczone na finansowanie określonego przedsięwzięcia czy też na utrzymanie siedziby.

Wszystko to, mimo doświadczenia, które zdobyłam w ciągu pięciu ostatnich lat, jest nadal bardzo wymagające, żmudne i wymaga wiele pracy, szczególnie teraz kiedy sytuacja ekonomiczno – polityczna jest tak skomplikowana na całym świecie – w Polsce i w Armenii również.

Na szczęście nie jestem w tym sama. Chciałabym z tego miejsca gorąco podziękować wszystkim, którzy poprzez swoje zaangażowanie i pracę włączali się w realizację zadań, inicjatyw i projektów realizowanych w naszej organizacji.

Dziękuję gorąco panu ambasadorowi Pawłowi Ciepłakowi za popieranie i wspieranie naszych inicjatyw, pan ambasador kończy misję dyplomatyczną w Armenii, życzę wielu sukcesów w nowym miejscu, panu konsulowi Jarosławowi Strycharskiemu za okazywaną pomoc w realizacji naszych pomysłów i owocną współpracę.

Dziękuję nauczycielom języka polskiego, szczególnie pani Agnieszce Wasilczuk, na której pomoc zawsze mogłam liczyć, bez której wiele rzeczy nie wyszłoby, która poprzez swoje zaangażowanie i niestrudzoną pracę jest często sercem i mózgiem naszego stowarzyszenia.

Dziękuję pani Joli Goździk- lektorce języka polskiego na Uniwersytecie Briusowa za współpracę, wiele ciekawych pomysłów, poczucie humoru i uśmiech.

Dziękuję nauczycielkom, które pracują obecnie w innych krajach, pani Henryce Jachimowicz i pani Monice Lotosz.

Dziękuję panu Pawłowi Eliasowi, który przyjechał do nas niedawno.

Dziękuję pracownikom Ambasady Rzeczypospolitej Polskiej w Armenii: pani Sofii Czilingaryan, Meline Jeghoyan, Mariannie Karakeyan, Nairze Atanesyan za nieocenioną pomoc w różnych sprawach.

թյունների և նախագծերի կյանքի կոչմանը:

Շնորհակալություն եմ հայտնում դեսպան պարոն Պավել Չեպլակին՝ մեր նախաձեռնություններին աջակցելու համար, դեսպանն ավարտում է դիվանագիտական առաքելությունը Հայաստանում, մաղթում եմ Չեզ բազում հաջողություններ կոր վայրում, ցանկանում եմ շնորհակալություն հայտնել հյուպատոս պարոն Յարոսլավ Ստրիխարսկում մեր գաղափարների իրականացման գործում աջակցության և արդյունավետ համագործակցության համար:

Ցանկանում եմ շնորհակալություն հայտնել լեհերենի ուսուցիչներին, հատկապես Ազնի-եշկա Վաշիլչուկին, ում աջակցության վրա կարողացել եմ միշտ հույս դնել, առանց ում շատ գործեր չէին ստացվի, ով իր նվիրվածությամբ և փութաջան աշխատանքով շատ հաճախ մեր միության սիրտն ու միտքն է:

Շնորհակալություն եմ հայտնում Բրյուսովի անվան համալսարանի լեհերենի դասախոս Յոլա Գոջիկին՝ համագործակցության, բազմաթիվ հետաքրքիր գաղափարների, հումորի զգացման և ժպիտի համար:

Շնորհակալություն եմ հայտնում այն ուսուցիչներին, ովքեր ներկայումս աշխատում են այլ երկրներում՝ Հենրիկա Յախիմովիչին և Մոնիկա Լոտոշին:

Շնորհակալություն Պավել Էլիասին, ով վերջերս է եկել մեզ մոտ:

Ցանկանում եմ շնորհակալություն հայտնել Հայաստանում Լեհաստանի Հանրապետության դեսպանության աշխատակիցներ Սոֆիա Չիլինգարյանին, Մելինե Եղոյանին, Մարիաննա Կարակեյանին, Նաիրա Աթանեսյանին զանազան հարցերում անզնահատելի օգնության համար:

Հատուկ շնորհակալություն եմ հայտնում Նրանց, առանց որոնց մեր գործունեությունն անհնարին կլիներ:

Շնորհակալություն Անահիտ Տեր-Մելիքսեթյանին՝ երգչախմբում երկար տարիների աշխատանքի համար: Նրա տաղանդի և երգչախմբի երգիչների տաղանդի շնորհիվ է, որ մեր երգչախմբի երգացանկն այդքան հարուստ է:

Շնորհակալություն Նունե Մամյանին իր շարունակական աջակցության, կազմակերպչական հարցերում աջակցության, նվիրվածության և համբերատարության համար:

Շնորհակալություն Իրինա Կոնցևիչին մեր գրասենյակում ադմինիստրատիվ աշխատանքի համար:

Ցանկանում եմ շնորհակալություն հայտնել Մարկ

Szczególne podziękowania kieruję do osób, bez których działania nasze byłyby niemożliwe.

Dziękuję pani Anahit Ter-Meliksetyan za wieloletnią pracę w chórze. To dzięki jej talentowi i talentowi chórzystów repertuar naszego chóru jest tak bogaty.

Dziękuję pani Nune Mamyan za nieustające wsparcie, zajmowanie się sprawami organizacyjnymi, za poświęcenie i cierpliwość.

Dziękuję pani Irinie Koncewicz za prace administracyjną w naszym biurze.

Dziękuję panu Markowi Mikoyanowi za redagowanie graficzne naszych publikacji, w tym kwartalnika „Póki my żyjemy”. Za pomysły i kreatywność.

Dziękuję pani Lianie Pirumowej za pracę akompaniatorki, za miłość do Szopena, za ducha muzyki.

Dziękuję pani Yekaterinie Isahakyan za inicjatywę założycielską „Polonii” za to, że ciągle jesteśmy razem.

Dziękuję pani Zarze Geworgian- Zylbersztein za organizację pracy w naszej filii w Giumri.

Dziękuję pani Halinie Elisbaryan, pani Gayanie Tizyan, za udział w wydarzeniach artystycznych i nie tylko.

Szczególne dziękuję pani konsul Annie Świtalskiej, której pomoc i wsparcie na początku mojej pracy były nieocenione i będą zawsze za nie wdzięczna.

Dziękuję Państwu za zaufanie, którym zostałam obdarzona 5 lat temu. Jak wspominałam na początku mojego wystąpienia – kontynuowanie dzieła pani Ałły Kuźmińskiej było i nadal jest dla mnie ogromnym zaszczytem. Praca na rzecz wspólnoty wymaga wiele trudu, ale jednocześnie daje ogrom satysfakcji. Jestem szczęśliwa i dumna, że moje nazwisko może być wymieniane obok nazwisk Ałły Kuźmińskiej i Jekateriny Isahakyan – założycielek i prezesów Związku Polaków w Armenii „Polonia”.

Szanowni Państwo, tworząc stowarzyszenie, działamy w imię wspólnej idei na rzecz Polonii, Polaków i Polski w Armenii. Dziękuję Państwu za pomoc i zaangażowanie, które zawsze były dla mnie inspirujące. Jestem niezmiernie wdzięczna.

Na zakończenie pragnę powiedzieć, że przez pięć lat trwania mojej kadencji wiele się nauczyłam, zdobyłam mnóstwo nowych doświadczeń, praca w „Polonii” stanowi ważną część mojego życia.

Dziękuję za uwagę.

Միկոյանին՝ մեր հրապարակումների, այդ թվում՝ «Պուկի մի ժյուսի» ամսագրի, գրաֆիկական դիզայնն ապահովելու համար: Շնորհակալություն գաղափարների և կրեատիվության համար:

Ցանկանում եմ շնորհակալություն հայտնել Լիանա Փիրումովային՝ որպես սկազակցող իր աշխատանքի, Շոպենի հանդեպ սիրո, երաժշտության ոգին մեզ փոխանցելու համար:

Ցանկանում եմ շնորհակալություն հայտնել Եկատերինա Իսահակյանին «Պուլոնիայի» ստեղծման նախաձեռնության համար, այն բանի համար, որ մինչև հիմա միասին ենք:

Շնորհակալություն տիկին Զառա Գևորգյան-Զիլբերշտեյնին Գյումրիի՝ մեր մասնաճյուղում աշխատանքները կազմակերպելու համար:

Շնորհակալություն Խալինա Էլիզբարյանին, Գայանե Թիզյանին՝ գեղարվեստական միջոցառումներին մասնակցելու համար, և ոչ միայն:

Հատկապես ցանկանում եմ շնորհակալություն հայտնել Հայաստանում Լեհաստանի Հանրապետության հյուպատոս Պանի Աննա Շվիտալսկային, ում օգնությունն ու աջակցությունն իմ աշխատանքի սկզբում անգնահատելի էին, և ես միշտ երախտապարտ կլինեմ դրա համար:

Շնորհակալ եմ այն վստահության համար, որն իմ առջև դրվել է որպես խնդիր 5 տարի առաջ: Ինչպես ելույթիս սկզբում նշեցի, Պանի Ալլա Կուզմինսկայի աշխատանքը շարունակելը եղել է և այժմ էլ մեծ պատիվ է հանդիսանում ինձ համար: Համայնքի համար աշխատելը մեծ ջանքեր է պահանջում, սակայն միևնույն ժամանակ պատճառում է մեծ բավականություն:

Ես երջանիկ եմ և հպարտ, որ իմ անունը կարող է հիշատակվել Հայաստանում Լեհերի «Պուլոնիա» միության հիմնադիրների և նախագահների՝ Ալլա Կուզմինսկայի և Եկատերինա Իսահակյանի անունների կողքին:

Տիկնայք և պարոնայք, ստեղծելով մեր միությունը, մենք գործում ենք հանուն ընդհանուր գաղափարի՝ ի շահ Պուլոնիայի, Հայաստանում լեհերի և Լեհաստանի: Շնորհակալ եմ բոլորիդ օգնության և նվիրվածության համար, որոնք մշտապես ինձ համար ոգեշնչման աղբյուր են հանդիսացել: Անչափ շնորհակալ եմ:

Ամփոփելով խոսքս ասեմ, որ պաշտոնավարման հիևց տարիների ընթացքում շատ բան եմ սովորել, փորձ եմ ձեռք բերել, «Պուլոնիայում» աշխատելն իմ կյանքի կարևոր մասն է կազմում:

Շնորհակալություն ուշադրության համար:

NOWY NAUCZYCIEL

z Polski

ՆՈՐ ՌԻՍՈՒՑԻՉ ԼԵՀԱՍՏԱՆԻՑ

Uczniowie biorący udział w zajęciach z języka polskiego w Związku Polaków w Armenii “Polonia” poznali już nowego nauczyciela skierowanego do pracy w Armenii przez Ośrodek Rozwoju Polskiej Edukacji za Granicą w Warszawie. Jest nim pan Paweł Elias.

Nasza wieloletnia nauczycielka- pani Agnieszka Wasilczuk postanowiła przenieść się do Giumri, gdzie kontynuuje pracę w tamtejszym ośrodku polonijnym.

Z niecierpliwością czekaliśmy na nowego nauczyciela i nurtowały nas pytania: Czy z taką samą pasją jak pani Agnieszka będzie podchodził do swojej pracy? Czy odnajdziemy z nim wspólny język?

Pan Paweł Elias jest magistrem filologii polskiej, studia ukończył na Uniwersytecie Wrocławskim i już jako student piątego roku podjął pracę w polskim szkolnictwie średnim i zawodowym, którą kontynuował przez kilkanaście lat.



Հայաստանում լեհերի «Պոլոնիա» միությունում լեհերեն ուսումնասիրողները ծանոթացան Արտերկրում լեհական կրթության զարգացման կենտրոնի կողմից Հայաստան գործուղված Նոր ուսուցչի հետ: Ուսուցիչը Պավել Էլիասն է:

Մեր Նախկին ուսուցչուհին՝ Ագնիեշկա Վաշիչուկը որոշել էր տեղափոխվել Գյումրի, որտեղ շարունակում է աշխատանքը տեղի Պոլոնիայի մասնաճյուղում:

Անհամբեր սպասում էինք Նոր ուսուցչին, և մեզ անհանգստացնում էր երկու հարց. արդյո՞ք նա նույն եռանդով կմոտենա աշխատանքին, ինչպես պանի Ագնիեշկան, արդյո՞ք նրա հետ ընդհանուր լեզու կգտնենք:

Պավել Էլիասը լեհերենի բանասիրության մագիստրոս է, ավարտել է Վրոցլավի համալսարանը և, լինելով հիմաբորդ կուրսի ուսանող, արդեն սկսել է աշխատել միջնակարգ և մասնագիտական դպրոցներում, որը շարունակել է մի քանի տարի:

Այիուհետև ձեռնամուխ է եղել Լեհաստանի սահմաններից դուրս լեհերենի և լեհական մշակույթի տարածման դժվարին առաքելությանը: 2007-2011 թվականներին աշխատել է Ղրիմում՝ Յալթայի, Սիմֆերոպոլի և Սևաստոպոլի պոլոնիայի կազմակերպություններում, մինևույն ժամանակ եղել է Յալթայի Հումանիտար համալսարանի լեհերենի դասախոս: Չորս տարի Լեհաստանում անցկացնելուց հետո Նորից վերադարձել է Ուկրաինա և յոթ տարի աշխատել է Խերսոնի «Պոլոնիա» լեհական ընկերությունում, որտեղից մեկնել է 2022 թվականին, պատերազմի սկսվելուց մի

Następnie podjął się trudnej misji szerzenia polskiej kultury i języka polskiego poza granicami Polski. W latach 2007-2011 pracował na Krymie w środowiskach polonijnych Jałty, Symferopola, Sewastopola, dodatkowo był też lektorem języka polskiego na Uniwersytecie Humanistycznym w Jałcie. Po czteroletnim pobycie w Polsce znów wrócił na Ukrainę i siedem lat pracował Obwodowym Towarzystwie Polskim "Polonia" w Chersoniu, skąd wyjechał w roku 2022, kilka dni przed rozpoczęciem wojny. Obecnie, ucząc w Erywanii, prowadzi zajęcia zdalne ze swoimi uczniami z Chersonia rozsiyanymi po całej Europie, głównie Polsce.

Już podczas pierwszego spotkania z uczniami w erywańskiej "Polonii" pan Paweł dał się poznać jako człowiek otwarty, bezpośredni, indywidualnie traktujący każdego ucznia. Zajęcia prowadzone przez pana Pawła Eliasa są wieloaspektowe, zawierają elementy kultury, historii i geografii Polski. Nauczyciel opowiada nam ciekawe historie ze swojego życia zawodowego i podróży do różnych krajów. Potrafi wytworzyć ciepłą atmosferę, co buduje wzajemne zaufanie między uczniami i nauczycielem.

Pan Paweł żywo interesuje się też historią i kulturą Armenii, szczególnie zachwyca go sakralna architektura Armenii. Mamy nadzieję, że nasz kraj stanie się dla niego drugim domem.

David Vardanyan

քանի օր առաջ: Այժմ էլ, գտնվելով Երևանում, հեռավար դասընթացներ է վարում Խերսոնի իր սաների հետ, ովքեր սփռված են ողջ Եվրոպայում, հիմնականում՝ Լեհաստանում:

Երևանի «Պոլոնիա»-ում սաների հետ առաջին իսկ հանդիպումից հետո պարզ դարձավ, որ պան Պավելը բաց, անմիջական անձնավորություն է, ով անհատական մոտեցում է ցուցաբերում յուրաքանչյուրիս: Պան Պավելի անցկացրած դասերը բազմակողմանի են, ներառում են իրենց մեջ Լեհաստանի մշակույթի, պատմության և աշխարհագրության տարրեր: Մեր ուսուցիչը մեզ պատմում է նաև հետաքրքիր պատմություններ իր մասնագիտական կյանքի և տարբեր երկրներ կատարած ճանապարհորդությունների մասին: Նա կարողացել է ստեղծել ջերմ մթնոլորտ, որը ձևավորում է փոխադարձ վստահություն սաների և ուսուցչի միջև: Պան Պավելը նաև շատ հետաքրքրված է Հայաստանի պատմությամբ և մշակույթով, նրան հատկապես հիացնում է Հայաստանի սրբավայրերի ճարտարապետությունը:

Հուսով ենք, որ մեր երկիրը նրա համար կդառնա երկրորդ տուն:

Պավիլ Վարդանյան



NARODOWE CZYTANIE

ԱԶԳԱՅԻՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ

Zgodnie z kilkuletnią już tradycją Związek Polaków w Armenii “Polonia” wziął udział w 11 edycji Narodowego Czytania zainicjowanego w roku 2012 przez prezydenta RP Andrzeja Dudę. Po “Przedwiośniu”, “Weselu” i “Moralności pani Dulskiej”...przyszła czas na “Ballady i romanse” Adama Mickiewicza. Zdarzenie miało miejsce 22.10.2022. Tym razem polskie utwory romantyczne wybrzmiały w przestrzeni muzealnej, a tłem dla opowieści o “niesłychanych zjawiskach” były obrazy ormiańskiego malarza Avetisjana Minasa. Muzeum, którego zbiory prezentują prace plastyczne artysty znajduje się Džadzur- rodzinnej wsi artysty. Narodowe Czytanie- 2022 otworzyła prezes Związku Polaków w Armenii “Polonia”- pani Liana Harutyunyan. Gośćmi



Համաձայն արդեն մի քանի տարի տևող ավանդության, Հայաստանում լեհերի «Պոլոնիա» միությունը մասնակցեց «Ազգային ընթերցանության» արդեն 11-րդ միջոցառմանը, որն առաջին անգամ նախաձեռնվել է 2012 թվականին Անդժեյ Դուդայի կողմից: «Գարնանամուտ»-ից, «Հարսանիք»-ից և «Պանի Դուլսկայի բարոյախոսություն»-ից հետո եկավ Ադամ Միցկևիչի «Բալլադներ և ռոմանսներ»-ի ժամանակը: Ընթերցանությունը տեղի ունեցավ 2022 թվականի հոկտեմբերի 22-ին: Այս անգամ լեհական ռոմանտիկ ստեղծագործությունները հնչեցին թանգարանային տարածքում, իսկ «չսլած երևույթների» մասին պատմվածքների ֆոնը հայ գեղանկարիչ Մինաս Ավետիսյանի կտավներն էին: Թանգարանը, որտեղ ներկայացված են նկարչի աշխատանքները, գտնվում է Ջաջուռում՝ նկարչի հայրենի գյուղում: «Ազգային ընթերցանություն-2022»-ն սկսվեց Հայաստանում լեհերի «Պոլոնիա» միության նախագահ տիկին Լիանա Հարությունյանի բացման խոսքով: Լեհաստանի մշակութային օրացույցի այս կարևոր իրադարձության հյուրերն էին Հայաստանում Լեհաստանի Հանրապետության դեսպանության դիվանագետները՝ Հայաստանում Լեհաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Պավել Չիեպլակի գլխավորությամբ: Դեսպանը ջերմ խոսքերով դիմավորեց թանգարանում հավաքված հյուրերին: Հանդիսատեսների մեջ էին Հայաստանում լեհերի «Պոլոնիա» միության անդամները Երևանից և Գյումրիից: Այս գրական հանդիպմանը ներկա էին նաև Արտերկրում լեհական կրթության զարգացման կենտրոնի կողմից Հայաստան գործուղված լեհերենի ուսուցիչներ Ագնիեշկա Վաշիլչուկը և Պավել

ZAPRASZAMY NA NARODOWE CZYTANIE

Ballady i romanse

W programie: głośne czytanie „Ballad i romansów”
Adama Mickiewicza z elementami inscenizacji,
zwiedzanie muzeum Minasa Avetisjana w Dżadzur,
poczęstunek.



22.10.2022 (SOBOTA), GODZ. 13.00

Związek Polaków w Armenii „Polonia”
Filia w Giumri, ul. Manusziana 2

